

2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ ԵՎ 3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ¹⁵

Ծրագրով նախատեսված թվով 6 վիճակագրական աշխատանքները (200001-200003 և 300001-300003 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

2004թ. ընթացքում ամսական պարբերականությամբ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունից և ՀՀ կենտրոնական բանկից հավաքագրվել են վիճակագրական տեղեկություններ պետական և համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի, դրամավարկային և բանկային համակարգի վիճակագրության հիմնական ցուցանիշների վերաբերյալ:

Եռամսյակային պարբերականությամբ ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամից հավաքագրվել են հիմնադրամի բյուջեի եկամուտների և ծախսերի, ինչպես նաև ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունից՝ ՀՀ պետական պարտքի (ներքին և արտաքին) վերաբերյալ վիճակագրական տեղեկությունները:

ԱՄՀ ՏՏՀՄ-ին անդամակցության նպատակով, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունից ստացվել են ՀՀ կենտրոնական և համախմբված կառավարության, արտաքին պետական պարտքի, իսկ ՀՀ կենտրոնական բանկից՝ կենտրոնական բանկի և բանկային համակարգի ամփոփ հաշվեկշռային ցուցանիշների և միջազգային պահուսների վերաբերյալ ամփոփ տվյալները և տեղադրվել ԱՄՀ Ստանդարտների տարածման տեղեկագրում և ՀՀ ԱՎԾ կողմից վարվող ՏՏՀՄ Հայաստանի Ազգային ամփոփ տվյալների էջում:

ՀՀ կենտրոնական բանկից պարբերաբար ստացվել են նաև արտարժույթների ամենօրյա հաշվարկային փոխարժեքների վերաբերյալ տեղեկություններ:

¹⁵ Տես՝ Ծրագիր, Հավելված I: